ԱՐԱ ԶՈՀՐԱԲՅԱՆԸ ՆԱՄԱԿՈՎ ԴԻՄԵԼ Է ԲԱԿՈ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

29.03.2014 11:15

Մարտի 28-ին հայկական էլեկտրոնային լրատվամիջոցներից մեկը հրապարակել էր մի խումբ փաստաբանների' «Առարկություններ' փաստաբանների հավատարմագրման դեմ» վերտառությամբ դիմումը:
Նմանատիպ դիմում 2013թ. դեկտեմբերին ստացել էր նաև ՀՀ փաստաբանների պալատը, ինչի կապակցությամբ 2014 թվականի հունվարին ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը նամակով դիմել է ԼՂՀ Նախագահ Բակո Սահակյանին, պատճենը' ԼՂՀ արդարադատության նախարար Արարատ Դանիելյանին, ԼՂՀ փաստաբանների պալատի նախագահ Ալեքսանդր Գալստյանին և հավատարմագրման դեմ առարկություն ունեցող փաստաբաններին:
Նամակում Արա Զոհրաբյանը անդրադարձել է այն տեսակետներին, որոնք առաջ էին քաշել առարկող փաստաբանները: Պալատի նախագահը մասնավորապես գրել է.
«ՀՀ քաղաքացիներ Արմեն Մելքոնյանը, Արթուր Գևորգյանը, Աշոտ Սարյանը, Արմեն Եսոյանը, Նվեր Ղահրամանյանը և Քրիստինե Առաքելյանը (այսուհետ՝ Դիմողներ) դիմել են Ձեզ՝ խնդրելով պարզաբանումներ պահանջել ՀՀ փաստաբանների պալատի նախագահից ու խորհրդի անդամներից և վերացնել խորհրդի որոշման խտրականությունը, այն է՝ ԼՂՀ փաստաբանական գործունեության առնվազն տասնութ ամսվա ստաժ ունենալու, ինչպես նաև առնվազն հինգ տարի ԼՂՀ-ում մշտապես բնակություն ունենալու հանգամանքները:
Նույնաբովանդակ դիմումներ հասցեագրվել էին նաև Հայաստանի Հանրապետության Նախագահին և ՀՀ արդարադատության նախարարին:
Դիմողներին անհանգստացրել է ՀՀ փաստաբանների պալատի (այսուհետ՝ Պալատ) խորհրդի 15.11.2013թ. թիվ 30/3-Լ որոշմամբ հաստատված «Այլ պետության փաստաբանին հավատարմագիր տալու և հավատարմագրի գործողությունը դադարեցնելու կարգը» (այսուհետ՝ Կարգ):
Դիմողներն անհեթեթ են որակել Պալատի խորհրդի նշված որոշումը, քանի որ «հայերի երկրորդ Հանրապետությունը ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի նախագահն ու անդամները դասել են որպես այլ պետություն»:
Դիմողները գտնում են, որ ԼՂՀ փաստաբանների պալատի կողմից անցկացված 2013թ. որակավորման քննությունները հանձնած ԼՂՀ փաստաբանների պալատի կողմից արտոնագիր ստացած փաստաբանները պրակտիկորեն զրկվել են Պալատի կողմից տրվող հավատարմագրից:

Տեղեկացնում ենք Ձեզ, որ Դիմողների փաստարկները հիմնավոր չեն, հետևյալ պատճառաբանությամբ.
Ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17.1 հոդվածի 2-րդ մասով՝ Պալատի խորհուրդը հաստատել է այլ պետության փաստաբանին հավատարմագիր տալու և հավատարմագրի գործողությունը դադարեցնելու կարգը։
Պալատի խորհուրդն իրավացիորեն Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը համարել է պետություն, քանի որ ԼՂՀ-ն ունի միջազգային փաստաթղթերով, այդ թվում՝ Մոնտեվիդեոյի կոնվենիցայով նախատեսված պետությանը բնորոշ բոլոր վավերապայմանները։ Ավելին՝ վերը նշված կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն. «Պետության քաղաքական գոյությունը կախված չէ այլ պետությունների կողմից նրա ճանաչված լինելուց»։ Հետևաբար, Պալատի խորհրդին այս պայմաններում հետաքրքիր չէ ԼՂՀ-ի՝ միջազգային իրավունքի սուբյեկտ հանդիսանալու կամ չհանդիսանալու, այլ պետությունների կողմից որպես պետություն ճանաչված լինելու կամ չլինելու հանգամանքը։
Կարգով այլ պետության փաստաբաններին հավատարմագրելու համար նախատեսվել են համապատասխան վճարներ։ Միևնույն ժամանակ, Կարգի 19-րդ կետով ԼՂՀ փաստաբանների համար Պալատի խորհուրդը սահմանել է արտոնություն և նրանց ազատել է հավատարմագրման համար որևէ վճարից, որոշ բացառություններով։
Դիմողները ՀՀ քաղաքացիներ հանդիսանալով, շրջանցելով ՀՀ փաստաբանական դպրոցում պարտադիր սովորելու պայմանը, իրենց բնակության վայրը փոխելու միջոցով ԼՂՀ փաստաբանների պալատի կողմից կազմակերպվող քննությունները հանձնել են և ստացել ԼՂՀ փաստաբանի արտոնագրեր (հատկանշական է, որ նոր փաստաբանների կազմում կան փաստաբանական դպրոցից հեռացված և ընդունելության քննությունները չհանձնած անձինք)։
Պալատի խորհրդի կողմից սահմանած ԼՂՀ փաստաբաններին վերաբերող բացառությունները վերաբերում են ՀՀ-ից արհեստական կարգով ԼՂՀ քաղաքացի դարձած անձանց, որոնց հիմնական նպատակն է Հայաստանի Հանրապետության տարածքում փաստաբանական գործունեություն իրականացնելը, առանց դրա համար նախատեսված լրացուցիչ ուսուցումն անցնելու։
Այդ պատճառով է, որ Կարգի 19-րդ կետում նշվել է՝ ԼՂՀ փաստաբանը ազատվում է այլ պետության փաստաբանի հավատարմագրման վճարից, եթե ունի՝
• սույն կարգի հաստատման օրվա դրությամբ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում

փաստաբանական գործունեության առնվազն տասնութ ամսվա ստաժ, կամ
• առնվազն հինգ տարի մշտապես բնակվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում։
Ինչպես տեսնում ենք, ԼՂՀ-ում առնվազն 5 տարի մշտապես բնակված ԼՂՀ փաստաբանը անկախ որևէ ստաժից անվճար կարող է հավատարմագրվել»։

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })